Ոչ պաշտոնական թարգմանություն

ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ և վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ[1]

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է սույն դիտարկումները որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից փախստականներին և իր մանդատի ներքո գտնվող այլ անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու և փախստականների խնդրի հարատև լուծումներ գտնելու հարցում կառավարություններին աջակցելու լիազորությամբ օժտված գործակալություն: Ինչպես սահմանված է իր Կանոնադրությամբ, ՄԱԿ ՓԳՀ-ն միջազգային պաշտպանության իր մանդատը իրականացնում է, այդ թվում, «*փախստականների պաշտպանության նպատակով միջազգային կոնվենցիաների կնքմանը և վավերացմանը նպաստելով, դրանց իրականացումը վերահսկելով և դրանցում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնելով*»[2]: ՄԱԿ ՓԳՀ-ի՝ իր Կանոնադրությամբ սահմանված վերահսկողական լիազորությունը վերահաստատված է Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ 1951թ. Կոնվենցիա) 35-րդ հոդվածում, համաձայն որի՝ պայմանավորվող պետությունները պարտավորվում են «*համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ […] համապատասխան գործառույթների իրականացման հարցում, և, մասնավորապես, հեշտացնում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականությունը*»:[3] Նմանատիպ դրույթ ներառված է Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1967 թվականի արձանագրության II հոդվածում[4]:

---

[1] Հրապարակվել են Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում 2020 թվականի օգոստոսի 10-ին:

[2] Տես Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրության 8-րդ մասի (ա) կետը, որը վերանայվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 58/153 բանաձևով, 24 փետրվարի 2004թ.: Այն հասանելի է հետևյալ հղումով՝ https://bit.ly/2p47kBm:

[3] ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիա*, 28 հուլիսի 1951թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 189, էջ 137, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/3be01b964.html:

[4] ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի վերաբերյալ արձանագրություն*, 31 հունվարի 1967թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 606, էջ 267, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/3ae6b3ae4.html:

Ստորև ներկայացված դիտարկումները հիմնականում վերցված են 2018 թվականին *Հանձնման և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխությունների* կապակցությամբ արված դիտարկումներից[5]:

Տեղեկությունների տրամադրումը և ապաստանի ընթացակարգերի հասանելիությունը անազատության մեջ գտնվող անձանց համար

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 47-րդ հոդվածում առաջարկվող լրացմամբ, որով սահմանվում է ազատությունը սահմանափակված օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ապաստանի համար դիմելու իրավունքի մասին տեղեկացնելու պարտավորություն, պետք է նշվի, թե որ պետական մարմինն է տրամադրում այս տեղեկությունը: Ներկա տարբերակով օրենքի նախագծի այս դրույթը կարծես թե չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջին, որն է՝ սահմանել օրենքով կարգավորվող հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Ավելին, հաշվի առնելով ապաստան հայցելու միջազգայնորեն ճանաչված իրավունքն ու բոլոր ժամանակներում չվերադարձելիության սկզբունքը հարգելու անհրաժեշտությունը՝ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է առաջարկվող փոփոխությամբ նախատեսել ապաստանի համար դիմելու հնարավորություն, երբ ապաստանի հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողնվել խնդրո առարկա անձի վերահսկողությունից դուրս գտնվող բացառիկ հանգամանքների պատճառով:

Ապաստանի վերաբերյալ որոշումների մասին ծանուցումը

Առաջարկվող փոփոխությունների ընդհանուր խնդիրն է կրճատել ապաստանի հայցերի քննության ժամկետները և բողոքարկման վերջնաժամկետները որոշակի իրավիճակներում, մասնավորապես՝ երբ դիմումատուները անազատության մեջ են: Այս համատեքստում և իրավական պաշտպանության միջոցների արդյունավետ և արագ հասանելիության ապահովման նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 52-րդ հոդվածի առաջարկվող փոփոխությամբ նաև նախատեսել անազատության մեջ գտնվող դիմումատուների վերաբերյալ կայացված վարչական ակտի մասին նրանց փաստաբաններին ծանուցելու հնարավորություն, և որ դիմումատուներին տրամադրվի որոշման օրինակն իրենց համար հասկանալի լեզվով կամ իրենց համար հասկանալի լեզվով թարգմանչական օժանդակություն, որպեսզի նրանք կարողանան հասկանալ որոշման բովանդակությունը[6]:

---

[5] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները Հանձնման և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ*, 2018թ. հունիս, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/5bd81c584.html:

[6] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ քննարկումների փաստաթուղթ. Արդար և արագ. արագացված և պարզեցված ընթացակարգերը Եվրոպական միությունում,* 25 հուլիսի 2018թ., էջ 12, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/5b589eef4.html:

Կրճատված վերջնաժամկետները և ժամկետները

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 57-րդ հոդվածի առաջարկվող փոփոխությամբ և վարչական դատավարության օրենսգրքի առաջարկվող նոր 222.14 հոդվածի 1-ին մասով և 222.15 հոդվածի 1-ին և 4-րդ մասերով նախատեսվում են ապաստանի հայցի վերաբերյալ որոշումների բողոքարկման ավելի սեղմ ժամկետներ (10 օր՝ վարչական դատարանում և վերաքննիչ վարչական դատարանում բողոքարկման, և 5 օր՝ վճռաբեկ դատարանում բողոքարկման համար)։ ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է նշել, որ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող փոփոխությունը հղում է կատարում է 52.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին՝ մի դրույթի, որն իրականում գոյություն չունի։ Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է ընդգծել, որ արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքը պահանջում է, որ ապաստան հայցողին տրվեն բավարար ժամանակ և հնարավորություններ բողոքարկման իրավունքից օգտվելու համար։ Որևէ կրճատված ժամկետ չպետք է այս իրավունքի իրականացումը գործնականորեն անհնար կամ չափազանց դժվար դարձնի և միևնույն ժամանակ պետք է թույլ տա դիմումատուներին ձեռնարկել անհրաժեշտ ընթացակարգային քայլերը բողոքը ներկայացնելու համար՝ հաշվի առնելով, որ հնարավոր է՝ նրանք ի վիճակի չլինեն հասկանալու վարույթի և/կամ փաստաթղթերի լեզուն։ Դիմումատուներին նաև անհրաժեշտ է լինելու ժամանակ՝ հասկանալու լիազոր մարմնի որոշումը և այն բողոքարկելու մասին տրամադրված ցանկացած տեղեկություն, ինչպես նաև իրավաբանական աջակցություն ապահովելու, իրենց գործի փաթեթի հասանելիություն խնդրելու և/կամ ստանալու, իրավական խորհրդատուի հետ խորհրդակցելու, բողոքարկման հիմքերը քննարկելու և բողոքը կազմելու համար։ Այս բոլոր պատճառներից ելնելով՝ մարդու իրավունքների վերաբերյալ ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային իրավական նորմերով պահանջվում է բավարար ժամանակ բողոքի ներկայացման համար[7]։ Մասնավորապես՝ իրավաբանական օգնության արդյունավետ հասանելիությունը կարևոր երաշխիք է հարկադիր վերադարձի վտանգի դեմ պաշտպանության միջոցի արդյունավետության առումով, ինչպես ընդգծվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից[8]։ Ուստի ՄԱԿ ՓԳՀ-ն գտնում է, որ բողոքարկման կրճատված ժամկետները կարող են տեղին լինել միայն, եթե ուղեկցվեն իրավաբանական օգնության հասանելիությանն առնչվող խստագույն երաշխիքներով։ Դրանք առկա չեն ընթացիկ կիրառելի իրավական դրույթների պայմաններում[9]։ Երաշխիքները, որոնք պետք է հասանելի լինեն ինչպես օրենքում, այնպես էլ պրակտիկայում, խիստ կարևոր են

---

[7] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները ապաստանի ընթացակարգերի կանոնակարգի վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի առաջարկի մասին, 2019թ. ապրիլ, COM (2016) 467*, էջեր 18-19, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/5cb597a27.html:

[8] *Կոնկան ընդդեմ Բելգիայի,* 51564/99, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 5 փետրվարի 2002թ., պարբ. 44, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/cases,ECHR,3e71fdfb4.html, *Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի*, Դիմում թիվ 30696/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 21 հունվարի 2011թ., պարբ. 301, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/cases,ECHR,4d39bc7f2.html:

[9] «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը անվճար իրավաբանական ներկայացուցչություն է նախատեսում միայն քրեական գործերի մինչդատական փուլում՝ այդպիսով բացառելով վարչական վարույթը։

Հայաստանի պարագայում՝ հաշվի առնելով ապաստան հայցողների համար պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնության հասանելիության վրա ազդող շարունակական լուրջ մարտահրավերները, որոնք բխում են ուղղորդման մեխանիզմի թերություններից, հանրային պաշտպանների (Հայաստանում պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնություն տրամադրողներ) հետ հաղորդակցվելիս թարգմանչական ծառայությունների հասանելիության բացակայությունից և հանրային պաշտպանների սահմանափակ կարողություններից։

Այս մարտահրավերները հատկապես ծանր հետևանքներ են ունենում անազատության մեջ գտնվող ապաստան հայցողների համար արդյունավետ պաշտպանության միջոցի հասանելիության վրա։ Ուստի ՄԱԿ ՓԳՀ-ն գտնում է, որ բողոքի ներկայացման առաջարկվող 10-օրյա ժամկետը (ՄԱԿ ՓԳՀ-ն հասկանում է, որ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ սա չի ներառում հանգստյան օրերը, և այդ կերպ դիմումատուին տրվում է առնվազն երկու շաբաթ) տեղին կլինի միայն, եթե ուղեկցվի հետևյալ հստակ երաշխիքներով. (i) ապաստան հայցողների համար առկա է անվճար իրավաբանական ներկայացուցչություն վարչական վարույթի փուլում[10] (սա պահանջում է փոփոխություն «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածում, որը սահմանում է անվճար իրավաբանական օգնության շրջանակը). (ii) «Փախստականների և ապաստանի» մասին օրենքում ուղղակի պահանջի ներառում առ այն, որ ապաստանի հարցերով լիազոր մարմինը դիմումատուի խնդրանքով և դիմումը ներկայացնելուց հետո հնարավորինս շուտ խնդրում է փաստաբան նշանակել վարչական վարույթում՝ այդպիսով գործնականում հեշտացնելով անվճար իրավաբանական աջակցության և ներկայացուցչության իրավունքի իրականացումը. (iii) հատուկ ընթացակարգային երաշխիքների կարիք ունեցող դիմումատուի կամ առանց ուղեկցության երեխայի դեպքում տրամադրվում է անվճար իրավաբանական աջակցություն և ներկայացուցչություն՝ անկախ դիմումատուի խնդրանքից[11]. (iv) պահանջ առ այն, որ բացասական որոշման մասին ծանուցման պահին դիմումատուները տեղեկացվում են անվճար իրավաբանական աջակցության և ներկայացուցչության իրենց իրավունքի մասին, այդ թվում՝ գրավոր կերպով, իրենց համար հասկանալի լեզվով, և որ ապաստանի հարցերով լիազոր մարմինը հնարավորինս շուտ խնդրում է նշանակել փաստաբան, եթե դիմումատուն գրավոր կերպով ուղղակիորեն չի հրաժարվում այդ իրավունքից. (v) եթե դիմումատուն անվճար իրավաբանական աջակցություն և ներկայացուցչություն է խնդրել, բողոքարկման ժամկետը հաշվվում է փաստաբանի նշանակման պահից[12]. (vi) բողոքարկման ժամկետը չի լրանում, քանի դեռ փաստաբանը դիմումատուին բողոքի ներկայացման հարցում

---

[10] Տես *Եվրոպական խորհրդարանի և խորհրդի կանոնակարգի առաջարկը, որով Միությունում միջազգային պաշտպանության միասնական ընթացակարգ է սահմանվում և չեղարկվում է 2013/32/EU դիրեկտիվը, COM (2016) 467*, 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները, հասանելի է հետևյալ հղումով՝ https://ec.europa.eu/transparency/regdoc/rep/1/2016/EN/1-2016-467-EN-F1-1.PDF։

[11] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները ապաստանի ընթացակարգերի կանոնակարգի վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի առաջարկի մասին, 2019թ. ապրիլ, COM (2016) 467*, էջեր 15-16, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/5cb597a27.html։

[12] Տես *Եվրոպական խորհրդարանի և խորհրդի կանոնակարգի առաջարկը, որով Միությունում միջազգային պաշտպանության միասնական ընթացակարգ է սահմանվում և չեղարկվում է 2013/32/EU դիրեկտիվը, COM (2016) 467*, 53-րդ հոդվածի 6-րդ պարբերությունը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://ec.europa.eu/transparency/regdoc/rep/1/2016/EN/1-2016-467-EN-F1-1.PDF։

խորհրդատվություն տրամադրելու արդյունավետ հնարավորություն չի ունեցել, և դիմումատուն, այդ խորհրդի համաձայն, գործելու արդյունավետ հնարավորություն չի ունեցել[13]. (vii) համապատասխան դատարանը կարող է երկարաձգել/վերականգնել ժամկետը, եթե առկա է դրա անհրաժեշտությունը՝ ելնելով դիմումատուի անհատական հանգամանքներից[14]:

Վարչական դատավարության օրենսգրքի առաջարկվող 222.14 և 222.15 հոդվածների նպատակն է կրճատել դատական վերանայման տևողությունը՝ սահմանելով ապաստանին առնչվող բողոքների քննության ժամկետներ (1 ամիս՝ վարչական դատարանի, 15 օր՝ վերաքննիչ վարչական դատարանի և 5 օր վճռաբեկ դատարանի համար)։ ՄԱԿ ՓԳՀ-ն գտնում է, որ չնայած արդյունավետ ընթացակարգերը կարևոր են, ժամկետները պետք է լինեն ողջամիտ, որպեսզի ապահովվի արդարություն և արդյունավետություն։ Բողոքի քննության չափազանց սեղմ և ոչ ճկուն ժամկետները կարող են հանգեցնել համապատասխան փաստերի ավելի մակերեսային քննության՝ այդպիսով գուցեն նվազեցնելով վերանայման որակն ու շրջանակը, ինչպես նաև հանգեցնելով շտապողականությամբ կայացված որոշումների, որոնք սխալ լինելու ռիսկ են պարունակում, կարող են հետագա բողոքարկումների կամ ապաստանի կրկնակի դիմումների պատճառ դառնալ՝ ծանրաբեռնելով համակարգը, և կարող են վատագույն դեպքում հանգեցնել չվերադարձելիության սկզբունքի խախտման։ Բացի այդ, սեղմ ժամկետները կաշխատեն միայն համապատասխան պայմանների առկայության դեպքում, և եթե բավարար ռեսուրսներ տրամադրվեն դատարաններին, որոնք թույլ կտան նրանց համապարփակ քննության ենթարկել կոնկրետ գործի անհատական հանգամանքները, ձեռք բերել և ուսումնասիրել համապատասխան ապացույցները։ Երբ սա հնարավոր չէ սահմանված ժամկետներում, դրանք պետք է երկարաձգելի լինեն, որպեսզի ապահովվի պաշտպանության միջոցի արդյունավետությունը[15]։ Արագ միջոցների կարևորությունն ընդունելով հանդերձ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հավասարապես գտել է, որ սա չպետք է գերադասվի ընթացակարգային երաշխիքների արդյունավետությունից[16]։ Վերը նշվածից ելնելով՝ առաջարկվող կրճատված ժամկետները պետք է վերանայվեն և լինեն երկարաձգելի, որպեսզի երաշխավորվի արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքը բարդ դեպքերում, հատկապես՝ հաշվի առնելով Հայաստանում վարչական գործեր քննող

---

[13] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները ապաստանի ընթացակարգերի կանոնակարգի վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի առաջարկի մասին, 2019թ. ապրիլ, COM (2016) 467*, էջ 19, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/5cb597a27.html։

[14] Տես *Բրահիմ Սամբա Դիուֆն ընդդեմ Աշխատանքի, զբաղվածության և ներգաղթի նախարարության, Գործ թիվ C-69/10*, Եվրոպական միություն, Եվրոպական միության արդարադատության դատարան, 28 հուլիսի 2011թ., պարբ. 66-68, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/cases,ECJ,4e37bd2b2.html։

[15] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ հայտարարությունը ապահով երկրների հայեցակարգերի և ընդունելիության ընթացակարգերում արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքի վերաբերյալ, որը հրապարակվել է ԼՀ-ն ընդդեմ Բհանդորլասի էս Մենեքյուլթյուգյի Հիվաթալի գործով Եվրոպական միության արդարադատության դատարան նախնական վճռի համար ուղղորդման համատեքստում (C-564/18)*, 2019թ. սեպտեմբեր, պարբ. 23-25, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/5d7b842c4.html։

[16] *Ի.Մ.-ն ընդդեմ Ֆրանսիայի*, Դիմում թիվ 9152/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2 փետրվարի 2012թ., պարբ. 147, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/cases,ECHR,4f2932442.html։

դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածությունը և ապաստանի գործերով մասնագիտացման պակասը:

Ապաստանի կրկնակի դիմումները

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 59-րդ հոդվածի վերանայված ձևակերպման նպատակն է փոխարինել «կրկնակի դիմում» հասկացությունը «երկրորդ դիմում» հասկացությամբ: ՄԱԿ ՓԳՀ-ն նշում է, որ այդ վերաձևակերպումը կարող է հանգեցնել հնարավոր հետագա դիմումների թիվը սահմանափակելուն՝ գործնականում հնարավորություն ընձեռելով միայն մեկ կրկնակի դիմումի: Նման սահմանափակումը կարող է հանգեցնել չվերադարձելիության սկզբունքի և մարդու իրավունքների վերաբերյալ այլ պարտավորությունների խախտման[17], քանի որ կան բազմաթիվ պատճառներ, որոնցով դիմողը կարող է ցանկանալ ներկայացնել լրացուցիչ ապացույցներ կամ բարձրացնել նոր հարցեր: Նման պատճառներ կարող են ծագել նախնական կամ երկրորդ դիմումի քննությունից հետո ցանկացած պահի. (i) փոփոխություն ծագման երկրում տիրող իրավիճակում. (ii) դիմումատուի գործունեությունը ապաստանի երկրում. (iii) գաղտնիության սկզբունքի խախտում. (iv) նախորդ ընթացակարգի թերությունները կամ բացթողումները. (v) տրավմա, ամոթ կամ այլ պատճառներ, որոնք խանգարել են ամբողջական բանավոր վկայություն տալ ավելի վաղ փուլում. (vi) փոփոխություն ապաստանի երկրի օրենսդրության, քաղաքականության մեջ կամ դատական պրակտիկայում. (vii) նախկինում անհասանելի ապացույցների ձեռքբերում: Հետևաբար, գործնականում որևէ տարընթերցումից խուսափելու համար, ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է պահպանել «կրկնակի դիմում» հասկացությունը: Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է ընդգծել, որ ապաստանի համակարգի հնարավոր չարաշահումները կանխելու հետ կապված իրավաչափ մտահոգությունները կարելի է փարատել կրկնակի դիմումների նախնական քննության համար կրճատված ժամկետներ սահմանելով, «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 52.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ արագացված կարգով կրկնակի դիմումները քննարկելու հնարավորությունից օգտվելով, բողոքարկման ավելի սեղմ ժամկետ սահմանելով, ինչպես նաև բողոքարկման՝ վերադարձը կասեցնող ուժից բացառություն նախատեսելով՝ միևնույն ժամանակ պահպանելով կասեցում շնորհելու խնդրանքով դատարանին դիմելու իրավունքն ու արդյունավետ հնարավորությունը[18]:

ՄԱԿ ՓԳՀ-ն նկատում է, որ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի առաջարկվող 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը կրկնակի դիմումների մասին վերաբերում է միայն

---

[17] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները անդամ պետություններում միջազգային պաշտպանության տրամադրման և չեղարկման նվազագույն չափորոշիչների մասին Եվրոպական խորհրդարանի և խորհրդի դիրեկտիվի մասին Եվրոպական հանձնաժողովի առաջարկի վերաբերյալ (COM(2009)554, 21 հոկտեմբերի 2009թ.*, էջեր 36-37, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/pdfid/4c63ebd32.pdf:

[18] ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները ապաստանի ընթացակարգերի կանոնակարգի մասին Եվրոպական հանձնաժողովի առաջարկի վերաբերյալ, 2019թ. ապրիլ, COM (2016) 467*, էջեր 19-20, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/docid/5cb597a27.html:

«հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի առնչությամբ նոր հանգամանքներին»՝ որպես նման դիմումների թույլատրելիության հիմքի: Ի տարբերություն 59-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ներկա ձևակերպմանը՝ այս ձևակերպումն այսպիսով կարծես թե չի ներառում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված իրավիճակները, մասնավորապես՝ համատարած բռնությունը, մարդու իրավունքների զանգվածային խախտումները և հասարակական կարգը խախտող այլ իրադարձությունները: Հավատարիմ մնալով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և եվրոպական պայմանագրերում ամրագրված չվերադարձելիության պարտավորություններին՝ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է պահպանել 59-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ներկա ձևակերպումը, որը ներառում է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ փախստականի ինչպես սահմանափակ, այնպես էլ ընդլայնված սահմանումները:

ՄԱԿ ՓԳՀ-ն հուսով է, որ իր դիտարկումներն ու առաջարկությունները մանրակրկիտ քննության կառնվեն: ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է հասանելի մնալ հետագա խորհրդակցությունների համար, ինչպես նաև պատրաստ է տրամադրել տեխնիկական աջակցություն և փորձառություն՝ ապահովելու համար, որ այս օրենսդրական նախաձեռնությունը հանգեցնի այնպիսի փոփոխությունների ընդունմանը, որոնք ավելի կկատարելագործեն ապաստանի ազգային համակարգի աշխատանքը:

ՄԱԿ ՓԳՀ, 2020թ. սեպտեմբեր